ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ և ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԳՐԱՎԱԾ ՓՈՐՁԱԳԵՏ ԱՐՏԱՇԵՍ ԹԱՌԼԱՄԱՋՅԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ-ՀՈԿՏԵՄԲԵՐ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ

Ի կատարումն 2019 թվականի հոկտեմբերի 11-ին կնքված աշխատանքային պայմանագրի (փորձագետ ընդգրկելու վերաբերյալ) 2.1.6-րդ կետի ներկայացնում եմ իմ կողմից կատարված աշխատանքների կիսամյակային (վեց ամսվա) հաշվետվությունը:

Հաշվետու ժամանակահատվածում իմ կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Պետական գույքի կառավարման հայեցակարգից (ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 5-ի N 1834-Լ որոշում) բխող և ՀՀ կառավարության 2019-2023թթ. գործունեության միջոցառումների ծրագրին համապատասխան մասնակցել եմ ՀՀ կառավարության կողմից ընդունված ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի N 202-Ն որոշման պահանջներին համապատասխան անշարժ գույքի մշտադիտարկման (մոնիթորինգի) ծրագրի կազմման աշխատանքներին (մեթոդական մասով):

2. Մասնակցել եմ օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն շրջանառության մեջ դրված «Պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի անհատույց օգտագործման տրամադրման կարգը և պայմանները հաստատելու, ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 304-Ն ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 587-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N 1130-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշման մեջ փոփոխություններ և

լրացումներ կատարելու մասին» և «Լիզինգի կիրառմամբ Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող գույքի օտարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերի մշակման աշխատանքներին:

3. Մասնակցել եմ ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության գործունեության ծրագրի «Պետական գույքի արդյունավետ կառավարում» 6.7-րդ կետի մշակման աշխատանքներին:

4. Մասնակցել եմ ՀՀ կառավարության 2022 թվականի միջոցառումների ծրագրի (պետական գույքին առնչվող) մշակման աշխատանքներին:

5. Մասնակցել եմ պետական գույքի 2017-2020թթ. մասնավորեցման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի մշակմանը, որոնք ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ:

6. Մասնակցել եմ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների 2021 թվականի առաջին կիսամյակի արդյունքների ֆինանսատնտեսական ամփոփ վերլուծությոպլունների իրականացմանը և 2020 թվականի գործունեության գնահատմանը, ինչպես նաև ներկայացրել եմ համապատասխան առաջարկություններ, որոնք (վերլուծության արդյունքները և եզրակացությունները) ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ:

7. Մասնակցել եմ պետական գույքի կառավարման կոմիտեի եռամսյակային և կիսամյակային գործունեությունը ներկայացնող հաշվետվությունների կազմման, ինչպես նաև պետական գույքի մասնավորեցման 2017-2020թթ-ի ծրագրի 2020 թվականի ու պետական գույքի կառավարման 2018-2020թթ-ի ծրագրի 2020 թվականի տարեկան հաշվետվությունների լրամշակման և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելու աշխատանքներին:

8. Փորձագիտական առաջարկություններ և եզրակացություններ եմ ներկայացրել մի շարք ՀՀ օրենքների նախագծերի և այլ իրավական ակտերի նախագծերի ու մշակված ռազմավարական փաստաթղթերի վերաբերյալ:

9. Մասնակցել եմ պետական գույքային հարաբերությունները կանոնակարգող ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումներից բխող պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի հրամանների մշակման աշխատանքներին:

10. Մասնակցել եմ պետական գույքի կառավարման կոմիտեի ներքին աուդիտի կազմակերպման աշխատանքներին:

11. Կատարել եմ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի և նախագահի տեղակալների կողմից պետական գույքի կառավարման կանոնակարգմանն առնչվող հանձնարարականները, ինչպես նաև մասնակցել եմ պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի մշակման վարչության գործառույթներին վերաբերող մեթոդական բնույթի ընթացիկ աշխատանքների կատարմանը:

ՓՈՐՁԱԳԵՏ՝ **ԱՐՏԱՇԵՍ ԹԱՌԼԱՄԱՋՅԱՆ**

07.10.2021թ.